

3423

Ի. Ս Տ Ա Լ Ի Ն

ՃԱՌ ՀԱՐԿԱԾԱՅԻՆ
ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ



3K33

b-33

Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1938



Պրոխտարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ՅԿՅՅ

Ժ-33

Ի. Ս Տ Ա Լ Ի Ն

այր

21 JUN 2005

14 NOV 2009

ՃԱՌ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ
ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

1938 թ. փետրվարի 19-ին

ՊԵՏՀՐԱՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1938

3423

ՀԱՌ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՌԻԹԵՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

1933 թ. փետրվարի 19-ին

Ընկեր՝ կոլտնտեսականներ և կոլտնտեսուհիներ։
Յես չեյի մտածում հանդես գալ ձեր համագումարում։
Չեյի մտածում, վորովհետև ինձնից առաջ հանդես
յեկած հեռուորների ձառերում արդեն ասված է այն
ամենը, ինչ վոր պետք էր ասել,—ասված է լավ ու
դիպուկ։ Արժե՞ արդյոք դրանից հետո ելի հանդես
գալ։ Բայց քանի վոր դուք պնդում եք, իսկ ուժը
ձեր ձեռքին է (յեկարատև ծափահարություններ),—յես
պարտավոր եմ յենթադրել։

Մի քանի խոսք կասեմ առանձին հարցերի
մասին։

1

ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԻՆ ՄԻԱԿ ՃԻՇՏ
ՈՒՂԻՆ Ե

Առաջին հարց—ճիշտ է արդյոք այն ուղին, վոր
բռնել է կոլտնտեսական գյուղացիութիւնը, ճիշտ է
արդյոք կոլտնտեսային ուղին։

5

И. СТАЛИН

РЕЧЬ НА ПЕРВОМ ВСЕСОЮЗНОМ
СЪЕЗДЕ КОЛХОЗНИКОВ-УДАРНИКОВ

Аргмиз—Издательство
политической литературы
Ереван ● 1938

3684
38

Այս հարցը դատարկ հարց չէ: Դուք, կոլտնտես-
սություններին հարվածախններդ, պետք է վոր կաս-
կածեիր չլինեք, վոր կոլտնտեսությունները կանգնած
են ճիշտ ճանապարհի վրա: Ուստի և հնարավոր է,
վոր այս հարցը ձեզ ավելորդ թվա: Բայց վոչ բոլոր
գյուղացիներն են մտածում այնպես, ինչպես դուք:
Գյուղացիների մեջ, այդ թվում կոլտնտեսականների
մեջ, գեռ քիչ չեն այնպիսի մարդիկ, վորոնք կաս-
կածում են կոլտնտեսային ուղու ճշտության մասին:
Յեվ դրանում վոչ մի զարմանալի բան չկա: Իրոք,
մարդիկ հարյուրավոր տարիներ ապրել են հին ձևով,
գնացել են հին ճանապարհով, կորացրել են մեջքը
կուլակի ու կարվածատիրոջ առաջ, վաշխառուի ու
սպեկուլանտի առաջ: Չի կարելի ասել, թե այդ հին,
կապիտալիստական ուղին հավանություն եր գտնում
գյուղացիների կողմից: Սակայն, նա, այդ հին ուղին,
տրորված, սովորական ուղի յեր, և գեռ վոչ վոք իրա-
կանում չի ապացուցել, թե կարելի յի վորեւէ այլ
կերպ ապրել, ավելի լավ ապրել: Մանավանդ վոր
բոլոր բուրժուական յերկրներում մարդիկ գեռեա
ապրում են հին ձևով... Յեվ հանկարծ այդ հին ճահ-
ճային կյանքն են ներխուժում բուրժուականները, ներխու-
ժում են փոթորկի նման և ասում. ժամանակն է
թողնելու հին ուղին, ժամանակն է սկսելու ապրել
նոր յեղանակով, կոլտնտեսավարի, ժամանակն է սկսե-
լու ապրել վոչ այնպես, ինչպես ապրում են ամենքը
բուրժուական յերկրներում, այլ ապրել նոր յի-
ղանակով, արտելավարի: Իսկ թե դա ինչ նոր
կյանք է, — ինչ իմանաս: Չլինի թե դա հին կյան-
քից ել վատթար դուրս գա: Համենայն դեպս նոր

ուղին սովորական ուղի չէ, տրորված և գեռ ամբող-
ջապես փորձված ուղի չէ: Ավելի լավ չե՞ արդյոք մնալ
հին ուղու վրա: Ավելի լավ չե՞, արդյոք, չշտապել
նոր, կոլտնտեսային ուղուն անցնելու: Արժե՞ արդյոք
ոխիլ անել:

Ահա ինչպիսի կասկածներ են համակում ներ-
կայումս աշխատավոր գյուղացիության մի մասին:

Մենք պարտավոր ենք արդյոք ցրել այդ կաս-
կածները: Մենք պարտավոր ենք արդյոք լույս աշ-
խարհ հանել դրանք, այդ կասկածները և ցույց տալ
թե ինչ արժեն նրանք: Պարզ է, վոր պարտավոր
ենք:

Հետևաբար, վերն առաջադրված հարցը չի կա-
րելի դատարկ հարց անվանել:

Այսպես ուրեմն՝ ճիշտ է արդյոք այն ուղին, վո-
րի վրա վոտք է դրել կոլտնտեսային գյուղացիու-
թյունը:

Ընկերներից վոմանք կարծում են, թե անցումը
գեպի նոր ուղին, կոլտնտեսությունների ուղին, մե-
զանում սկսվել է յերեք տարի առաջ: Այս ճիշտ է
մասամբ միայն: Իհարկե, կոլտնտեսությունների մաս-
սայական կառուցումը մեզանում սկսվեց յերեք տա-
րի առաջ: Այդ անցումը, ինչպես հայտնի յի, նշանա-
վորվեց կուլակության ջախջախումով և չքավորության
ու միջակների միլիոնավոր մասսաների շարժամբ
գեպի կոլտնտեսությունները: Այս ամենը ճիշտ է:
Բայց, վորպեսզի սկսեյինք այդ մասսայական ան-
ցումը գեպի կոլտնտեսությունները, պետք է, վոր
մեր ձեռքին ունենայինք մի քանի նախնական պայ-
մաններ, առանց վորոնց, ընդհանրապես ասած, մաս-

սայական կոլտնտեսային շարժում աներևակայելի յե-
 Հարկավոր եր ամենից առաջ ունենալ խորհրդային իշ-
 խանություն, վորն ոգնեց և շարունակում և ոգնել
 գյուղացիներին՝ կանգնելու կոլտնտեսությունների
 ուղու վրա: Յերկրորդ, հարկավոր եր դուրս քշել կա-
 վածատերերին ու կապիտալիստներին, խլել նրանցից
 գործարաններն ու հողերը և դրանք հայտարարել ժո-
 ղովրդի սեփականություն: Յերրորդ, հարկավոր եր
 սանձահարել կուլակությանը և խլել նրանից մեքե-
 նաներն ու տրակտորները: Չորրորդ, հարկավոր եր
 հայտարարել, վոր մեքենաներից ու տրակտորներից
 կարող են ոգտվել միմիայն կոլտնտեսությունների
 մեջ միավորված չքավորներն ու միջակները: Վերջա-
 պես, հարկավոր եր ինդուստրացման յենթարկել յեր-
 կիրը, կազմակերպել տրակտորային նոր արդյունա-
 բերություն, կառուցել գյուղատնտեսական մեքենա-
 շինության նոր գործարաններ՝ կոլտնտեսային գյու-
 ղացիությանն առատորեն տրակտորներ ու մեքենա-
 ներ մատակարարելու համար: Առանց այդ նախնա-
 կան պայմանների չեր ել կարելի մտածել կոլտնտե-
 սությունների ուղին մասսայաբար անցնելու մասին,
 վոր սկսվել և յերեք տարի առաջ:

Հետևաբար, դեպի կոլտնտեսությունների ուղին
 անցնելու համար հարկավոր եր ամենից առաջ կա-
 տարել Հոկտեմբերյան հեղափոխությունը, տապալել
 կապիտալիստներին ու կալվածատերերին, խլել նրան-
 ցից հողն ու գործարանները և կազմակերպել նոր
 արդյունաբերություն:

Հոկտեմբերյան հեղափոխությամբ ել սկսվեց ան-
 ցումը դեպի նոր ուղին, կոլտնտեսությունների ուղին:

Այդ գործն սկսեց նոր ուժով ծավալվել միմիայն մի
 յերեք տարի առաջ, վորովհետև միմիայն այդ ժա-
 մանակներն իրենց ամբողջ ծավալով դրսևորվեցին
 Հոկտեմբերյան հեղափոխության տնտեսական ար-
 դյունքները, միմիայն այդ ժամանակները հաջողվեց
 առաջ մղել յերկրի ինդուստրացումը:

Ժողովուրդների պատմությունը քիչ հեղափո-
 խություններ չգիտե: Դրանք Հոկտեմբերյան հեղա-
 փոխությունից տարբերվում են նրանով, վոր նրանք
 բոլորն ել միակողմանի հեղափոխություններ եյին:
 Աշխատավորների շահագործման մի ձևը փոխարին-
 վում եր շահագործման մի այլ ձևով, բայց շահա-
 գործումն ինքը մնում եր: Մի տեսակի շահագործող-
 ներն ու կեղեքիչները փոխարինվում եյին մի այլ
 տեսակի շահագործողներով ու կեղեքիչներով, բայց
 շահագործողներն ու կեղեքիչներն իրենք մնում եյին:
 Միայն Հոկտեմբերյան հեղափոխությունն եր, վոր
 իրեն նպատակ դրեց—վոչնչացնել ամեն մի շահագոր-
 ծում և վերացնել բոլոր և ամեն տեսակի շահագործող-
 ներին ու կեղեքիչներին:

Ստրուկների հեղափոխությունը լիկվիդացիայի
 յենթարկեց ստրկատերերին և վերացրեց աշխատա-
 վորների շահագործման ստրկատիրական ձևը: Բայց
 նրանց տեղը նա դրեց ճորտատերերին ու աշխատա-
 վորների շահագործման ճորտատիրական ձևը: Մի տե-
 սակի շահագործողները փոխարինվեցին մի այլ տե-
 սակի շահագործողներով: Ստրկատիրության ժամա-
 նակ «որենքն» ստրկատերերին թույլ եր տալիս սպա-
 նելու ստրուկներին: Ճորտատիրական կարգերի ժա-

մանակ «որենքը» ճորտատերերին թույլ եր տալիս «միմիայն» վաճառելու ճորտերին:

Ճորտ գյուղացիներին հեղափոխությունը լիկվիդացիայի յենթարկեց ճորտատերերին և վերացրեց շահագործման ճորտատիրական ձևը: Բայց նրանց տեղը նա զրեց կապիտալիստներին ու կալվածատերերին, աշխատավորներին շահագործման կապիտալիստական ու կալվածատիրական ձևը: Մի տեսակի շահագործողները փոխարինվեցին մի այլ տեսակի շահագործողներով: Ճորտատիրական կարգերի ժամանակ «որենքը» թույլ եր տալիս վաճառել ճորտերին: Կապիտալիստական կարգերի ժամանակ «որենքը» թույլ եր տալիս «միմիայն» գործադրկության ու աղքատացման, ավերման ու սովամահության մատնել աշխատավորներին:

Միմիայն մեր խորհրդային հեղափոխությունը, միմիայն մեր Հոկտեմբերյան հեղափոխությունը հարցը զրեց այնպես, վոր վնչ թե մի տեսակի շահագործողները փոխարինվեն մի այլ տեսակի շահագործողներով, վնչ թե շահագործման մի ձևը փոխարինվի մի այլ ձևով,—այլ արմատախիլ արվի ամեն մի շահագործում, արմատախիլ արվեն բոլոր ու ամեն տեսակի շահագործողները, բոլոր ու ամեն տեսակի հարուստներն ու ճնշողները, թե հները, թե նորերը: (Յերկարուսի ծափահարություններ):

Ահա թե ինչու Հոկտեմբերյան հեղափոխությունը նախնական պայման ու անհրաժեշտ նախադրյալ ե, վոր գյուղացիներն անցնեն նոր, կոլտնտեսային ուղին:

Ճիշտ վարվեցին արդոք գյուղացիները՝ պաշտ-

պանելով Հոկտեմբերյան հեղափոխությունը: Այո, նրանք ճիշտ վարվեցին: Նրանք ճիշտ վարվեցին, վորովհետև Հոկտեմբերյան հեղափոխությունը նրանց ողնեց իրենց ուսերից դեն շարժելու կալվածատերերին ու կապիտալիստներին, վաշխառուներին ու կուլակներին, վաճառականներին ու սպեկուլանտներին:

Սակայն դա հարցի միայն մի կողմն ե: Վնդել կեղեքիչներին, վնդել կալվածատերերին ու կապիտալիստներին, սանձահարել կուլակներին ու սպեկուլանտներին—այդ շատ լավ ե: Բայց այդ քիչ ե Հին կապանքներից վերջնականապես ազատագրվելու համար բավական չի լուկ ջախջախել շահագործողներին: Դրա համար հարկավոր ե նաև կառուցել նոր կյանք, կառուցել այնպիսի կյանք, վորը հնարավորություն տա աշխատավոր գյուղացուն բարելավելու իր նյութական ու կուլտուրական գրությունը և վեր բարձրանալու որեցոր, տարեցտարի: Դրա համար հարկավոր ե նոր կարգեր հաստատել գյուղում, կոլտնտեսային կարգեր: Դա հարցի մյուս կողմն ե:

Ինչով են տարբերվում հին կարգերը նոր, կոլտնտեսային կարգերից:

Հին կարգերում գյուղացիներն աշխատում եյին ջուկ-ջուկ, աշխատում եյին հին պապենական յեղանակներով, աշխատանքի հին գործիքներով, աշխատում եյին կալվածատերերի ու կապիտալիստների, կուլակների ու սպեկուլանտների համար, աշխատում եյին՝ ապրելով կիսաքաղց ու հարստացնելով ուրիշներին: Նոր, կոլտնտեսային կարգերում գյուղացիներն աշխատում են միասին, արտելով, աշխատում են նոր գործիքների՝ տրակտորների ու գյուղատնտե-

սական մեքենաների ոգնությամբ, աշխատում են իրենց համար և իրենց կոլտնտեսությունների համար, ապրում են առանց կապիտալիստների ու կալվածատերերի, առանց կուլակների ու սպեկուլանտների, աշխատում են նրա համար, վոր որեցոր բարեխղի՛ն իրենց նյութական ու կուլտուրական դրությունը: Այնտեղ, հին կարգերում, — կառավարությունը բուրժուական է և նա պաշտպանում է հարուստներին՝ աշխատավոր գյուղացիներին դեմ: Այստեղ, նոր, կոլտնտեսային կարգերում, — կառավարությունը բանվոր-գյուղացիական է և նա պաշտպանում է բանվորներին ու գյուղացիներին՝ բոլոր ու ամեն տեսակի հարուստների դեմ: Հին կարգերը տանում են դեպի կապիտալիզմ: Նոր կարգերը՝ դեպի սոցիալիզմ:

Ահա ձեզ յերկու ուղի, կապիտալիստական ուղին ու սոցիալիստական ուղին, դեպի տռաջ — դեպի սոցիալիզմը տանող ուղին և դեպի հետ — դեպի կապիտալիզմը տանող ուղին:

Կան մարդիկ, վորոնք կարծում են, թե կարելի չե վտաք զնել ինչ-վոր մի յերրորդ ուղի: Այդ յերրորդ ուղուն, վորը հայտնի չե վոչ վոքի, առանձնապես սիրով կռչում են այն միքանի տատանվող ընկերները, վորոնք դեռ լիովին չեն համոզվել կոլտնտեսային ուղու ճշտության մեջ: Նրանք ուզում են, վոր մենք վերադառնանք հին կարգերին, վերադառնանք միանձնյա տնտեսությանը, քայց առանց կապիտալիստների ու կալվածատերերի: Ընդվորում նրանք ուզում են, վոր մենք թողնենք «միմիայն» կուլակներին և այլ մանր կապիտալիստներին, վորպես մեր տնտեսական կարգերի որինական յերևույթ:

Իրոք դա յերրորդ ուղի չե, այլ յերկրորդը, — դեպի կապիտալիզմ տանող ուղին: Վորովհետեւ ինչ է նշանակում վերադառնալ միանձնյա տնտեսությանը և վերականգնել կուլակությունը: Այդ նշանակում է վերականգնել կուլակային ստրկությունը, վերականգնել գյուղացիության շահագործումը կուլակության կողմից և իշխանությունը տալ կուլակին: Բայց կարելի՞ չե արդյոք վերականգնել կուլակությունը և դրա հետ միասին պահպանել Խորհրդային իշխանությունը: Վնչ, չի կարելի: Կուլակության վերականգնումը պետք է տանի դեպի կուլակային իշխանության ստեղծումը և Խորհրդային իշխանության վերացումը, — հետևաբար նա պետք է տանի դեպի բուրժուական կառավարության գոյացումը: Իսկ բուրժուական կառավարության գոյացումն իր հերթին պետք է տանի դեպի կալվածատերերի ու կապիտալիստների վերականգնումը, կապիտալիզմի վերականգնումը: Այսպես կռչված՝ յերրորդ ճանապարհն իրոք յերկրորդ ճանապարհն է, կապիտալիզմին վերադառնալու ճանապարհը: Հապա մեկ հարցրեք գյուղացիներին, — ուղմ են արդյոք նրանք վերականգնել կուլակային ստրկությունը, վերադառնալ կապիտալիզմին, վերացնել Խորհրդային իշխանությունը և վերականգնել կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը: Հապա մեկ հարցրեք նրանց, և դուք կիմանաք, թե վորն է միակ ճիշտ ուղին համարում աշխատավոր գյուղացիների մեծամասնությունը

Հետևաբար կա միայն յերկու ուղի. կամ առաջ, դեպի վեր — դեպի նորը, կոլտնտեսային կարգերը,

սական մեքենաների ոգնությամբ, աշխատում են իրենց համար և իրենց կոլտնտեսությունների համար, ապրում են առանց կապիտալիստների ու կալվածատերերի, առանց կուլակների ու սպեկուլանտների, աշխատում են նրա համար, վոր որեցոր բարեկամ են իրենց նյութական ու կուլտուրական դրությունը: Այնտեղ, հին կարգերում,—կառավարությունը բուրժուական է և նա պաշտպանում է հարուստներին՝ աշխատավոր գյուղացիների դեմ: Այստեղ, նոր, կոլտնտեսային կարգերում,—կառավարությունը բանվորա-գյուղացիական է և նա պաշտպանում է բանվորներին ու գյուղացիներին՝ բոլոր ու ամեն տեսակի հարուստների դեմ: Հին կարգերը տանում են զեպի կապիտալիզմ: Նոր կարգերը՝ զեպի սոցիալիզմ:

Ահա ձեզ յերկու ուղի, կապիտալիստական ուղին ու սոցիալիստական ուղին, զեպի առաջ—զեպի սոցիալիզմը տանող ուղին և զեպի հետ—զեպի կապիտալիզմը տանող ուղին:

Կան մարզիկ, վորոնք կարծում են, թե կարելի չէ վտաք զնել ինչ-վոր մի յերրորդ ուղի: Այդ յերրորդ ուղուն, վորը հայտնի չէ վոչ վոքի, առանձնապես սիրով կառչում են այն միքանի տատանվող ընկերները, վորոնք զեռ լիովին չեն համոզվել կոլտնտեսային ուղու ճշտության մեջ: Նրանք ուզում են, վոր մենք վերադառնանք հին կարգերին, վերադառնանք միանձնյա տնտեսությանը, բայց առանց կապիտալիստների ու կալվածատերերի: Ընդվորում նրանք ուզում են, վոր մենք թողնենք «միմիայն» կուլակներին և այլ մանր կապիտալիստներին, վորպես մեր տնտեսական կարգերի որինական յերեույթ:

Իրոք զա յերրորդ ուղի չե, այլ յերկրորդը,—զեպի կապիտալիզմ տանող ուղին: Վորովհետե ինչ է նշանակում վերադառնալ միանձնյա տնտեսությանը և վերականգնել կուլակությունը: Այդ նշանակում է վերականգնել կուլակային ստրկությունը, վերականգնել գյուղացիության շահագործումը կուլակության կողմից և իշխանությունը տալ կուլակին: Բայց կարելի՞ չէ արդյոք վերականգնել կուլակությունը և դրա հետ միապին պահպանել խորհրդային իշխանությունը: Վնչ, չի կարելի: Կուլակության վերականգնումը պետք է տանի զեպի կուլակային իշխանության ստեղծումը և խորհրդային իշխանության վերացումը,—հետևաբար նա պետք է տանի զեպի բուրժուական կառավարության գոյացումը: Իսկ բուրժուական կառավարության գոյացումն իր հերթին պետք է տանի զեպի կալվածատերերի ու կապիտալիստների վերականգնումը, կապիտալիզմի վերականգնումը: Այսպես կոչված՝ յերրորդ ճանապարհն իրոք յերկրորդ ճանապարհն է, կապիտալիզմին վերադառնալու ճանապարհը: Հապա մեկ հարցրեք գյուղացիներին,—ուզում են արդյոք նրանք վերականգնել կուլակային ստրկությունը, վերադառնալ կապիտալիզմին, վերացնել խորհրդային իշխանությունը և վերականգնել կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը: Հապա մեկ հարցրեք նրանց, և դուք կմանաք, թե վնրն է միակ ճիշտ ուղին համարում աշխատավոր գյուղացիների մեծամասնությունը:

Հետևաբար կա միայն յերկու ուղի. կա՛մ առաջ, զեպի վեր—զեպի նորը, կոլտնտեսային կարգերը,

կա՛մ հետ, դեպի վար—դեպի հինը, կուլակային—կապիտալիստական կարգերը:

Յերրորդ ուղի չկա:

Աշխատավոր գյուղացիությունը ճիշտ վարվեց՝ մերժելով կապիտալիստական ուղին և կանգնելով կոլտնտեսային շինարարության ուղու վրա:

Ասում են, թե կոլտնտեսությունների ուղին ճիշտ ուղի չե, բայց նա դժվարին ե: Դա ճիշտ ե մասամբ միայն: Իհարկե, այդ ճանապարհին դժվարություններ կան: Լավ կյանքը ձրի չի ձեռք բերվում: Բայց բանն այն ե, վեր գլխավոր դժվարություններն արդեն անց են կացված, իսկ այն դժվարությունները, վորոնք կանգնած են ձեր առաջ, չե՛ ժե նույնիսկ, վորպեսզի դրանց մասին լուրջ խոսենք: Համենայն դեպս՝ համեմատած այն դժվարությունների հետ, վոր ապրեցին բանվորները 10—15 տարի առաջ, ներկայիս ձեր դժվարությունները, ընկեր կոլտնտեսականներ, յերեխայական խաղալիք են թվում: Այստեղ հանգես յեկան ձեր ճառախոսները և գովեցին Լենինգրադի, Մոսկվայի, Խարկովի, Դոնբասի բանվորներին: Նրանք ասացին, վոր նրանք, բանվորները, նվաճումներ ունեն, իսկ դուք, կոլտնտեսականներդ, շատ ավելի քիչ նվաճումներ ունեք: Ինձ թվում ե, թե ձեր հոետորների ճառերում նկատվում եր նույնիսկ ընկերական վորոշ նախանձ, թե՛ վորքան լավ կլիներ, յեթե մենք, կոլտնտեսական գյուղացիներս ել, ունենայինք նույնպիսի նվաճումներ, ինչպիսիք ունեք դուք, Լենինգրադի, Մոսկվայի, Դոնբասի, Խարկովի բանվորներդ... Այս ամենը լավ ե: Իսկ դուք գիտեք, թե ինչ են նստել այդ նվաճումները Լենինգրադի ու Մոսկվայի

բանվորներին, ինչպիսի գրկանքներ են կրել նրանք, վորպեսզի ձեռք բերեն, վերջապես, այդ նվաճումները: Յեա կարող եյի պատմել ձեզ մի քանի փաստեր բանվորների 1918 թվականի կյանքից, յերբ ամբողջ շաբաթներով վոչ մի պատառ հաց չեյին տալիս բանվորներին, ել չեմ խոսում մսի և այլ սննդամթերքների մասին: Այդ շրջանում լավագույն ժամանակներն եյին համարվում այն օրերը, յերբ հաջողվում եր Լենինգրադի ու Մոսկվայի բանվորներին տալ մեկ ութերորդ ֆունտ սե հաց և այն ել կիսով չափ քուսպ խառնած: Յեվ այդ տեկց վնչ թե մի ամիս և վոչ ել կես տարի, այլ ամբողջ յերկու տարի: Բայց բանվորները համբերում եյին և չեյին վհատվում, վորովհետև նրանք դիտեյին, վոր կզան ավելի լավ ժամանակներ, և նրանք վճռողական հաջողություններ ձեռք կբերեն: Յեվ ի՞նչ,—դուք տեսնում եք, վոր բանվորները չսխալվեցին: Դե համեմատեցեք ձեր դժվարություններն ու գրկանքները բանվորների ապրած դժվարությունների ու գրկանքների հետ, և դուք կտեսնեք, վոր դրանց մասին չարժե նույնիսկ լրջորեն խոսել:

Ի՞նչ ե պահանջվում կոլտնտեսային շարժումն առաջ մղելու և կոլտնտեսային շինարարությունն ամբողջ թափով ծավալելու համար:

Դրա համար ամենից առաջ պահանջվում ե, վոր կոլտնտեսություններն ունենան միանգամայն ապահոված և մշակելու համար պիտանի հող: Ունե՞ք դուք այդ հողը: Այո, ունեք: Հայտնի յե, վոր բոլոր լավագույն հողերը հանձնված են կոլտնտեսություններին և ամբացված են հաստատապես նրանց վրա: Հետևա-

բար, կոլտնտեսականները կարող են մշակել ու բա-
րելավել այդ հողը, վորքան ուզեն, առանց վախենա-
լու, թե նա կընկնի ուրիշի ձեռքը:

Յերկրորդ, զրա համար պահանջվում է, վոր
կոլտնտեսականները կարողանան ոգտվել տրակտոր-
ներից ու մեքենաներից: Ունե՞ք դուք գրանք: Այո,
ունեք: Իրրերին հայտնի յե, վոր տրակտորի մեր գոր-
ծարանները և գյուղատնտեսական մեքենաներ պատ-
րաստող գործարանները նախ և առաջ ու զլխավորա-
պես աշխատում են կոլտնտեսությունների համար,
նրանց մատակարարելով ժամանակակից բոլոր գոր-
ծիքները:

Դրա համար, վերջապես, պահանջվում է, վոր
կառավարությունն ըստ ամենայնի ոժանդակի կոլ-
տնտեսական գյուղացիներին թե՛ մարդկանցով, թե՛
ֆինանսներով և չթողնի, վոր թշնամի դասակարգերի
վերջամնացները (последыши) քայքայեն կոլտնտե-
սությունները: Ունե՞ք դուք այդպիսի կառավարու-
թյուն: Այո, ունեք: Նա կոչվում է բանվորա-գյու-
ղացիական խորհրդային կառավարություն: Մի յերկրի
անուն տվեք ինձ, վորտեղ կառավարությունը պաշտ-
պանի վնչ թե կապիտալիստներին ու կալվածատե-
րերին, վնչ թե կուլակներին և ուրիշ հարուստների,
այլ աշխատավոր գյուղացիներին: Աշխարհիս յերեսին
այդպիսի յերկիր չկա և չի յեղել: Միմիայն մեղա-
նում, խորհրդային յերկրում գոյություն ունի մի
կառավարություն, վորը սարի պես կանգնած է բան-
վորների ու կոլտնտեսական գյուղացիների թիկուն-
քին, քաղաքի ու գյուղի բոլոր աշխատավորների թի-

կունքին, ընդդեմ բոլոր հարուստների ու շահագոր-
ծողների: (Յերկարա՛ն ծափահարությու՛ններ):

Հետևաբար, դուք ամեն ինչ ունե՞ք՝ կոլտնտեսա-
յին շինարարությունը ծավալելու և հին կապանքնե-
րից կատարելապես ազատագրվելու համար:

Ձեզանից միայն մի բան է պահանջվում — աշխա-
տել ազնվորեն, բաշխել կոլտնտեսության յեկամուտ-
ներն ըստ աշխատանքի, պահպանել կոլտնտեսային
գույքը, պահպանել տրակտորներն ու մեքենաները,
լավ խնամել ձին, կատարել ձեր բանվորա-գյուղա-
ցիական պետության առաջադրանքները, ամրացնել
կոլտնտեսությունները և դուրս վնդել կոլտնտեսու-
թյուններից այնտեղ խցկված կուլակներին ու յեն-
թակուլակներին:

Դուք յերևի կհամաձայնեք ինձ հետ, վոր հաղ-
թահարել այդ դժվարությունները, այսինքն՝ աշխա-
տել ազնվորեն և պահպանել կոլտնտեսային գույքը, —
այնքան էլ դժվար չե: Մանավանդ վոր այժմ ձեզա-
նում աշխատանքը կատարվում է վնչ հարուստների
և վնչ էլ շահագործողների համար, այլ ձեզ, ձեր սե-
փական կոլտնտեսությունների համար:

Դուք տեսնում եք, վոր կոլտնտեսային ուղին,
սոցիալիզմի ուղին աշխատավոր գյուղացիության
համար միակ ճիշտ ուղին է:

2

ՄԵՐ ՄԵՐՁԱՎՈՐԱԳՈՒՅՈՒՅՆ ԽՆԴԻՐՆ Ե՝
ՈՒՆԵՎՈՐ ԴԱՐՁՆԵԼ ԲՈԼՈՐ ԿՈՆՏՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ

Յերկրորդ հարց — ինչ ենք ձեռք բերել մենք նոր
ուղու վրա, մեր կոլտնտեսային ճանապարհին և ինչ

ենք մտադիր ձեռք բերելու մերձավորագույն 2—3 տարում:

Սոցիալիզմը լավ բան է: Սոցիալիստական յերջանիկ կյանքն անվիճելիորեն լավ բան է: Բայց այդ ամենն ապագայի գործ է: Այժմ գլխավոր հարցն այն չէ, թե ինչ ձեռք կբերենք մենք ապագայում: Գլխավոր հարցն այն է, թե ինչ ենք արդեն ձեռք բերել մենք ներկայումս: Գյուղացիութունը վտար զրեց կոլանտեսային ուղին: Այդ շատ լավ է: Բայց ի՞նչ ձեռք բերեց նա այդ ուղու վրա: Ի՞նչ շոշափելի բան ձեռք բերինք մենք՝ ընթանալով կոլանտեսային ուղիով:

Մենք ձեռք բերինք այն, վոր ոգնեցինք չքավորների միլիոնավոր մասսաներին մտնելու կոլանտեսությունները: Մենք ձեռք բերինք այն, վոր չքավորների միլիոնավոր մասսաները, մտնելով կոլանտեսությունները և ոգտվելով այնտեղ լավագույն հողից ու արտադրության լավագույն գործիքներից, բարձրացան մինչև միջակների մակարդակը: Մենք ձեռք բերինք այն, վոր չքավորների միլիոնավոր մասսաները, վորոնք առաջ կիսաքաղց կյանք էյին վարում, այժմ կոլանտեսություններում դարձել են միջակներ, դարձել են ապահովված մարդիկ: Մենք ձեռք բերինք այն, վոր խարխիլեցինք գյուղացիների շերտավորումը՝ չքավորների ու կուլակների, ջախջախեցինք կուլակներին և ոգնեցինք չքավորներին՝ դառնալու իրենց աշխատանքի տերը կոլանտեսությունների ներսում, դառնալու միջակներ:

Ի՞նչ գրություն գոյություն ուներ նախքան կոլանտեսային շինարարության ծավալումը՝ մի չորս

տարի սրանից առաջ: Հարստանում և վեր էյին բարձրանում կուլակները: Աղքատանում և ավերվում էյին չքավորները, ստրուկ դառնալով կուլակներին: Դեպի վեր, դեպի կուլակներն էյին մագլցում միջակները և ամեն անգամ վայր էյին գլորվում, լրացնելով չքավորների շարքերը՝ ուրախացնելով կուլակներին: Դժվար չէ գլխի ընկնել, վոր այդ ամբողջ խառնաշփոթությունից շահում էյին միմիայն կուլակները և թերևս ունևորներից վոմանք: Գյուղում յուրաքանչյուր 100 տնտեսության կարելի էյր հաշվել 4—5 կուլակային տնտեսություն, 8 կամ 10 ունևոր տնտեսություն, 45—50 միջակ և մոտ 35 չքավոր տնտեսություն: Հետևաբար, գյուղացիական բոլոր տնտեսությունների առնվազն 35 տոկոսը կազմում էյին չքավորները, վորոնք հարկադրված էյին տանել կուլակային ստրկության լուծը: Ել յես չեմ խոսում միջակների սակավագույն խավերի մասին, վորոնք կազմում էյին միջակ գյուղացիության ավելի քան կես մասը և վորոնք իրենց գրությամբ քիչ բանով էյին տարբերվում չքավորներից և ուղղակի կախումն ունեյին կուլակներից:

Ծավալելով կոլանտեսային շինարարությունը՝ մենք ձեռք բերինք այն, վոր վոչնչացրինք այդ խառնաշփոթությունը և անարդարությունը, ջախջախեցինք կուլակային ստրկությունը, չքավորների այդ ամբողջ մասսան ներգրավեցինք կոլանտեսությունները, ապահովված վիճակի մեջ դրինք նրանց այնտեղ և նրանց բարձրացրինք միջակների մակարդակին, վորոնք կարող են ոգտվել կոլանտեսային հողից, կոլանտեսություններին տրված արտոնություններից,

ողտվել տրակտորներից, գյուղատնտեսական մեքենաներից:

Իսկ ի՞նչ է նշանակում այդ: Այդ նշանակում է, վոր առնվազն քսան միլիոն գյուղացիական բնակչութուն, առնվազն քսան միլիոն չքավորներ մենք փրկեցինք աղքատությունից ու ավերումից, փրկեցինք կուլակային ստրկությունից և կոլտնտեսությունների շնորհիվ դարձրինք ապահովված մարդիկ:

Այդ մեծ նվաճում է, ընկերներ: Այդ այնպիսի նվաճում է, վորպիսին դեռ չի տեսել աշխարհը և վորին դեռ չի հասել վոչ մի պետություն աշխարհում:

Ահա ձեզ կոլտնտեսային շինարարության գործնական, շոշափելի արդյունքները, այն բանի արդյունքները, վոր գյուղացիությունը վոտք դրեց կոլտնտեսությունների ուղին:

Բայց այդ մեր առաջին քայլն է միայն, մեր առաջին նվաճումը կոլտնտեսային շինարարության ճանապարհին:

Սխալ կլինեի կարծել, թե մենք պետք է կանգ առնենք այդ առաջին քայլի վրա, այդ առաջին նվաճման վրա: Վե՛չ, ընկերներ, մենք չենք կարող կանգ առնել այդ նվաճման վրա: Վորպեսզի ավելի առաջ շարժվենք և վերջնականապես ամրացնենք կոլտնտեսությունները, մենք պետք է առնենք յերկրորդ քայլը, մենք պետք է ձեռք բերենք նոր նվաճում: Վերջին է այդ յերկրորդ քայլը. այդ քայլն է՝ ել ավելի վեր բարձրացնել կոլտնտեսականներին,— թե նախկին չքավորներին, թե նախկին միջակներին: Այդ քայլն է՝ ունեւոր դարձնել բոլոր կոլ-

սնտեսականներին: Այն, ընկերներ, ունեւոր դարձնել: (Յերկարակ ծափահարւթյուններ):

Մենք ձեռք բերինք այն, վոր կոլտնտեսությունների շնորհիվ բարձրացրինք չքավորներին միջակների մակարդակին: Այդ շատ լավ է: Բայց այդ քիչ է: Այժմ մենք պետք է ձգտենք այն բանին, վոր մի քայլ ևս առնենք դեպի առաջ և ոգնենք բոլոր կոլտնտեսականներին,— թե նախկին չքավորներին, թե նախկին միջակներին,— բարձրանալու ունեւորների մակարդակին: Դրան կարելի չէ հասնել, և մենք պետք է հասնենք դրան՝ ինչ ել վոր լինի: (Յերկարակ ծափահարւթյուններ): Այժմ մենք ամեն ինչ ունենք՝ մեր այդ նպատակին հասնելու համար: Այժմ վատ են ոգտագործվում Պեր մեքենաներն ու տրակտորները: Մեր հողը լավ չի մշակվում: Բավական է միայն բարելավել մեքենաների ու տրակտորների ոգտագործումը, բավական է միայն բարելավել հողի մշակումը, և մենք կհասնենք այն բանին, վոր կրկնակի, յեռակի կալեւացնենք մեր մթերքների քանակը: Իսկ այդ միանգամայն բավական է՝ բոլոր կոլտնտեսականներին կոլտնտեսային դաշտերի ունեւոր աշխատավորներ դարձնելու համար:

Առաջներում ի՞նչ գրության մեջ եր ունեւորների հարցը: Ունեւոր դառնալու համար պետք եր նեղացնել իր հարեաններին, պետք եր շահագործել նրանց, ավելի թանգ վաճառել նրանց և ավելի եժան գնել նրանցից, վարձել բատրակներից վոմանց, կարգին շահագործել նրանց, փոքրիկ կապիտալ կուտակել և, այնուհետև ամրանալով, կուլակ դառնալ: Իսկապես դրանով ել բացատրվում է, վոր առաջ, միանձնյա տըն-

տեսութեան պայմաններում, ունեւորներն անվստահութիւն ու ատելութիւն ելին առաջացնում չքավորների ու միջակների մեջ: Այժմ բանն ուրիշ է: Այժմ պայմաններն ել այլ են: Վորպեսզի կոլտնտեսականներն ունեւոր դառնան, այժմ ամենևին չի պահանջվում նեղացնել կամ շահագործել իրենց հարևաններին: Ասենք՝ հեշտ ել չի այժմ շահագործել վորեն մեկին, վորովհետև հողի մասնավոր սեփականութիւնն կամ վարձակալութիւնն չկա այլևս մեղանում, մեքենաներն ու տրակտորները պատկանում են պետութեանը, իսկ կապիտալ ունեցող մարդիկ այժմ մոզայից ընկել են կոլտնտեսութիւններում: Այդպիսի մոզա յեղել եւ բայց արդեն վերացել է ընդմիջութեամբ: Վորպեսզի կոլտնտեսականներն ունեւոր դառնան, այժմ դրա համար միայն մի բան է պահանջվում. աշխատել կոլտնտեսութեան մեջ ազնվորեն, ճիշտ ոգտագործել տրակտորներն ու մեքենաները, ճիշտ ոգտագործել բանող անասուններին, ճիշտ մշակել հողը, պահպանել կոլտնտեսային սեփականութիւնը:

Յերբեմն ասում են. թե վոր սոցիալիզմ է, ել ի՞նչ կարիք կա աշխատելու: Աշխատում ելինք առաջ, աշխատում ենք այժմ, — միթե ժամանակը չի աշխատելուց դադարել: Այդպիսի խոսքերն արմատապես սխալ են, ընկերներ: Դա լողերի փիլիսոփայութիւնն է և վոչ թե ազնիվ աշխատողների: Սոցիալիզմն ամենեւին չի ժխտում աշխատանքը: Ընդհակառակը, սոցիալիզմը կառուցվում է աշխատանքի վրա: Սոցիալիզմն ու աշխատանքն անբաժանելի յեն միմյանցից: Մեր մեծ ուսուցիչ Լենինն ասել է. «Ով չի աշխատում, նա չի ուտում»: Ի՞նչ է նշանակում այդ, հում

գեմ են ուղղված Լենինի խոսքերը: Շահագործողները գեմ, նրանց գեմ, ովքեր իրենք չեն աշխատում, այլ ուրիշների են հարկադրում աշխատել և հարստանում են ուրիշների հաշվին: Ե՛լ ում գեմ: Նրանց գեմ, ովքեր իրենք լողութիւն են անում և ուզում են շահվել ուրիշների հաշվին: Սոցիալիզմը պահանջում է վոչ թե ծուլութիւն անել, այլ այն, վոր բոլոր մարդիկ աշխատեն ազնվորեն, աշխատեն վոչ թե ուրիշների համար, վոչ թե հարուստների ու շահագործողների համար, այլ իրենց համար, հասարակութեան համար: Յեւ յեթե մենք աշխատենք ազնվորեն, աշխատենք մեզ համար, մեր կոլտնտեսութիւնների համար, ապա կհասնենք այն բանին, վոր մի յերկու-յերեք տարում բոլոր կոլտնտեսականներին, թե նախկին չքավորներին, թե նախկին միջակներին, կբարձրացնենք ունեւորների մակարդակին, այնպիսի մարդկանց մակարդակին, վորոնք ոգտվում են միեքեքների լիառատութիւնից և կատարելապես կուլտուրական կյանք են վարում:

Այդ է այժմ մեր մերձավորագույն խնդիրը: Դրան մենք կարող ենք հասնել, և դրան մենք պետք է հասնենք՝ ինչ ել վոր լինի: (Յերկարակ ծափահարություներ):

3

ԱՌԱՆՁԻՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իսկ այժմ թույլ տվեք անցնել մի քանի առանձին դիտողութիւնների:

Ամենից առաջ գյուղի մեր կուսակցականների մասին: Ձեր մեջ կուսակցականներ կան, բայց ավելի

շատ են անկուսակցականները: Այդ շատ լավ է, վոր համագումարին հավաքվել են ավելի շատ անկուսակցականներ, քան կուսակցականներ, վորովհետև հենց անկուսակցականներին պետք է նախ և առաջ գրավել գեպի մեր գործը: Կան կոմյունիստներ, վորոնք անկուսակցական կոլտնտեսականներին բոլշևիկոսներ են մոտենում: Բայց կան նաև այնպիսիները, վորոնք գոռոզանում են իրենց կուսակցականությամբ և մոտիկ չեն թողնում անկուսակցականներին: Այդ լավ չէ և փաստակար ե: Բոլշևիկները ուժը, կոմունիստները ուժն այն է, վոր նրանք կարողանում են շրջապատել մեր կուսակցությունն անկուսակցական ակտիվի միլիոններով: Մենք, բոլշևիկներս, չէինք ունենա այն հաջողությունները, վորոնք ունենք այժմ, յեթե չկարողանայինք կուսակցության կողմը նվաճել միլիոնավոր անկուսակցական բանվորների ու գյուղացիների վստահությունը: Իսկ ի՞նչ է պահանջվում դրա համար: Դրա համար պահանջվում է, վոր կուսակցականները չպատվարվեն անկուսակցականներից, վոր կուսակցականները չփակվեն իրենց կուսակցական պատյանում, վոր նրանք չգոռոզանան իրենց կուսակցականությամբ, այլ լսեն անկուսակցականների ձայնը, վոր նրանք վնչ միայն սովորեցնեն անկուսակցականներին, այլև սովորեն նրանցից:

Չպետք է մոռանալ, վոր կուսակցականները յերկրնքից չեն ընկնում: Պետք է հիշել, վոր բոլոր կուսակցականները իրենք մի ժամանակ անկուսակցական են յեղել: Այսօր նա անկուսակցական է, իսկ վաղը կուսակցական կդառնա: Իսկապես ի՞նչ կա այստեղ

գոռոզանալու: Մեր մեջ, հին բոլշևիկներն ա մեջ, քիչ չեն գտնվի այնպիսի մարդիկ, վորոնք կուսակցության մեջ աշխատում են մի 20—30 տարի: Բայց չե՞ վոր մենք ինքներս ել մի ժամանակ նույնպես անկուսակցական ենք յեղել: Ի՞նչ կլինեի մեր բանը, յեթե մի 20—30 տարի առաջ մեզ վառեյին մեր այն ժամանակվա կուսակցականները և կուսակցությունից հեռու պահեյին մեզ: Հնարավոր է, վոր այն ժամանակ մենք կուսակցությունից բաժանված լինեյինք մի շարք տարիներով: Իսկ մենք, հին բոլշևիկներս, չե՞ վոր հետին մարդիկը չենք, ընկերներ: (Ուրախ աթալուծություն, յերկարակ ծափահարություններ):

Ահա թե ինչու մեր կուսակցականները, այժմյան յերիտասարդ կուսակցականները, վորոնք յերբեմն բարձր են պահում իրենց քիթն անկուսակցականների առաջ, պետք է հիշեն այս ամենը, պետք է հիշեն, վոր վնչ թե գոռոզությունը, այլ համեստությունն է, վոր զարգարում է բոլշևիկին:

Այժմ մի քանի խոսք կաճանց մասին, կոլսնեստոնիների մասին: Կանանց հարցը կոլանտեսություններում մեծ հարց է, ընկերներ: Յես գիտեմ, վոր ձեզանից շատերը թերագնահատում են կանանց և նույնիսկ ծիծաղում են նրանց վրա: Բայց այդ սխալ է, ընկերներ, լուրջ սխալ: Այստեղ բանը միայն այն չէ, վոր կանայք կազմում են բնակչության կեսը: Ամենից առաջ բանն այն է, վոր կոլտնտեսային շարժումն առաջ քաշեց ղեկավար պաշտոնների համար մի շարք յերեկի և ընդունակ կանանց: Դիտեցեք համագումարը, նրա կազմը, և գուք կտեսնեք, վոր կանայք վաղուց արդեն հետամնաց վիճակից անցել

են ատաղաժօրներէ շարքերը: Կանայք կոլտնտեսութ-
յուններում մեծ ուժ են: Գրվանի տակ՝ պահել այդ
ուժը՝ նշանակում է հանցագործութիւն թույլ տալ:
Մեր պարտականութիւնն է՝ ատաղ քաշել կոլտնտե-
սութիւններում կանանց և գործի զնեւ այդ ուժը:

Իհարկե, Խորհրդային իշխանութիւնը մոտիկ
անցյալում փոքրիկ թյուրիմացութիւն է ունեցել
կոլտնտեսուհիներէ հետ: Բանը վերաբերում եր կո-
վին: Բայց այժմ կովի հարցը կարգավորված է և
թյուրիմացութիւնը վերացված: (Յեթաւառս Ժափա-
հաւրքումներ): Մենք կարողացանք հասնել այն բա-
նին, վոր կոլտնտեսականների մեծ մասն իր տնտե-
սութիւն մեջ արդեն մի-մի կով ունի: Կանցնի մեկ-
յերկու տարի ետ, և դուք չեք գտնի վոչ մի կոլտնտե-
սական, վոր իր կովը չունենա: Մենք, բոլշևիկներս,
կաշխատենք, վոր բոլոր կոլտնտեսականները մեզա-
նում մի-մի կով ունենան: (Յեթաւառս Ժափահաւր-
քումներ):

Ինչ վերաբերում է իրենց՝ կոլտնտեսուհիներին,
ապա նրանք պետք է հիշեն կոլտնտեսութիւնների
ուժն ու նշանակութիւնը կանանց համար, պետք է
հիշեն, վոր միմիայն կոլտնտեսութիւն մեջ նրանք
հնարավորութիւն ունեն հավասար վտար մեկնելու
տղամարդկանց հետ: Առանց կոլտնտեսութիւնների՝
իրավունքների անհավասարութիւն, կոլտնտեսու-
թիւններում՝ իրավունքների հավասարութիւն: Թող
հիշեն այս մասին ընկեր կոլտնտեսուհիները և թող
նրանք իրենց աչքի լույսի պես պահեն կոլտնտեսա-
յին կարգերը: (Յեթաւառս Ժափահաւրքումներ):

Յերկու խոսք կովերիսեղաններէ ու կովերիսու-

հիմեի մասին կոլտնտեսութիւններում: Յերիտա-
սարդութիւնը մեր ապագան է, մեր հույսն է, ընկեր-
ներ: Յերիտասարդութիւնը պետք է փոխարինի մեզ,
ծերերիս: Նա պետք է հաղթական վախճանին հասցնի
մեր զրոշը: Գյուղացիների մեջ քիչ չեն այնպիսի
ծերեր, վորոնք ծանրաբեռնված են հին բեռով, վո-
րոնք ծանրաբեռնված են հին կյանքի սովորութիւն-
ներով ու հիշողութիւններով: Հասկանալի յե, վոր
նրանց վոչ-միշտ է հաջողվում հասնել կուսակցու-
թիւն հետեից, Խորհրդային իշխանութիւն հետեից:
Այլ է մեր յերիտասարդութիւնը: Նա ազատ է հին
բեռից և նա ամենից ավելի հեշտութիւնը է յուրաց-
նում լենինյան պատգամները, և հենց այն պատճա-
ռով, վոր յերիտասարդութիւնն ամենից ավելի հեշ-
տութիւն է յուրացնում լենինյան պատգամները,
հենց այդ պատճառով ել նա կոչված է ատաղ տանե-
լու հետ մնացողներին ու տատանվողներին: Ճիշտ է,
նրան պակասում են զիտելիքները: Բայց զիտելիք-
ները—դրանք ձեռքբերովի բան են. այսոր նրանք
չկան, վաղը նրանք կլինեն: Ուստի- խնդիրն այն է,
վոր պետք է սովորել և դարձյալ սովորել լենինիզմը:
Ընկեր կոմյերիտականներ ու կոմյերիտուհիներ, սո-
վորեցեք բոլշևիզմը և ատաղ տարեք տատանվողներին:
Ավելի քիչ շաղակրատեցեք, ավելի շատ աշխատեցեք,
և ձեր գործը գլուխ կգա անպայման: (Ժափահաւր-
քումներ):

Միքանի խոսք մեծացնեցների մասին: Մենա-
տնտեսների մասին այստեղ քիչ խոսեցին: Սակայն
այդ չի նշանակում, թե աշխարհում մենատնտես չկա
այլևս: Վոչ, չի նշանակում: Մենատնտեսներ կան և

Նրանց չի կարելի հաշվից դուրս գցել, վորովհետև նրանք մեր վաղվա կոլտնտեսականներն են: Յես գիտեմ, վոր մենատնտեսների մի մասը վերջնականապես ապականվել է և ղեմել ապեկուլացիայի: Յերեկի զրանով է բացատրվում, վոր մեր կոլտնտեսականները մենատնտեսներին մեծ ընտրությամբ են ընդունում կոլտնտեսությունների կազմի մեջ, իսկ յերբեմն ել բոլորովին չեն ընդունում նրանց: Այդ ճիշտ է, իհարկե, և այստեղ առարկություն չի կարող լինել: Բայց կա մենատնտեսների մի ուրիշ, ավելի մեծ մասը, վորն ապեկուլացիայի չի ղեմել, այլ իր հացը ձեռք է բերում աղնիվ աշխատանքով: Այդ մենատնտեսները թերեւս դեմ չլինեյին կոլտնտեսություն մտնել: Բայց նրանց, մի կողմից, խանգարում են իրենց տատանումները՝ կոլտնտեսային ճանապարհի ճշտության նկատմամբ, մյուս կողմից՝ այն խստությունը, վոր գոյություն ունի այժմ կոլտնտեսականների մեջ մենատնտեսների նկատմամբ:

Իհարկե, պետք է հասկանալ կոլտնտեսականներին է մտնել նրանց զրության մեջ: Այս տարիներում նրանք շատ վերափորանք ու ծաղր են տեսել մենատնտեսների կողմից: Բայց վերափորանքն ու ծաղրը վճռողական նշանակություն չպետք է ունենան այստեղ: Վատ է այն ղեկավարը, վորը չգիտե մոռանալ վերափորանքները և վորն իր զգացմունքներն ավելի բարձր է դասում կոլտնտեսային գործի շահերից: Յեթե դուք ուզում եք ղեկավար լինել, պետք է կարողանաք մոռանալ առանձին մենատնտեսների ձեզ հասցրած վերափորանքները: Յերկու տարի առաջ յես մի նամակ ստացա Վոլգայի շրջանի մի այլի

գեղջիկուհուց: Նա գանգատվում էր, թե իրեն չեն ուզում կոլտնտեսություն ընդունել, և ինձնից աջակցություն էր պահանջում: Յես հարցում արի կոլտնտեսությանը: Կոլտնտեսությունից ինձ պատասխանեցին, թե չեն կարող նրան կոլտնտեսություն ընդունել, վորովհետև նա վերափորել է կոլտնտեսային ժողովը: Ինչո՞ւմ է բանը: Բանն այն է, վոր գյուղացիներն այն ժողովում, վորտեղ կոլտնտեսականները մենատնտեսներին կոչ եյին անում մտնելու կոլտնտեսություն, նույն այդ այրին, բանից դուրս է գալիս, ի պատասխան այդ կոչին, բարձրացրել է իր փեշերը և ասել ե՛, ա՛յ, առեք ձեզ կոլտնտեսություն: (Ուրախ ափսոսալով, ծիծաղ): Անկասկած, նա սխալ է վարվել և վերափորել է ժողովը: Բայց միթե կարելի չէ մերժել նրան կոլտնտեսության մեջ ընդունել, յեթե նա մի տարի հետո անկեղծորեն զղջացել է և ընդունել իր սխալը: Յես կարծում եմ, վոր չի կարելի նրան մերժել: Յես այդպես ել գրեցի կոլտնտեսությանը: Այրուն ընդունեցին կոլտնտեսության մեջ: Յեւ ի՞նչ: Դուրս յեկավ, վոր նա աշխատում է ներկայումս կոլտնտեսության մեջ վնչ թե վերջինների, այլ առաջինների շարքերում: (Ծափահառախարկումներ):

Ահա ձեզ մի որինակ ել, վորը խոսում է այն մասին, վոր ղեկավարները, յեթե նրանք ցանկանում են իսկական ղեկավարներ մնալ, պետք է կարողանան մոռանալ վերափորանքները, յեթե այդ պահանջում են գործի շահերը:

Նույնը պետք է ասել նաև մենատնտեսների մասին առհասարակ: Յես դեմ չեմ, վոր կոլտնտեսություն ընդունեն ընտրությամբ: Բայց յես դեմ եմ,

վոր անխտիր բոլոր մենատնտեսների առաջ փակեն կոլտնտեսությունների ճանապարհը: Դա մեր, բոլշևիկյան քաղաքականությունը չէ: Կոլտնտեսականները չպետք է մոռանան, վոր նորերս իրենք ել մենատնտեսներ են յեղել:

Վերջապես միքանի խոսք Բեզենչուկի կոլսնեստակամների նամակի մասին: Այդ նամակը տպագրված էր, և դուք յերևի կարդացել եք այն: Անվիճելիորեն լավ նամակ է: Նա վկայում է, վոր մեր կոլտնտեսականների մեջ քիչ չեն կոլտնտեսային գործի փորձված ու զիտակից կազմակերպիչներն ու ագիտատորները, վորոնք մեր յերկրի պարծանքն են: Սակայն նամակում կա մի սխալ տեղ, վորի հետ վոչ մի կերպ չի կարելի համաձայնել: Բանն այն է, վոր Բեզենչուկի ընկերները կոլտնտեսության մեջ կատարած իրենց աշխատանքը պատկերում են վորպես մի համեստ ու համարյա աննշան աշխատանք, իսկ հոկտոբրների ու առաջնորդների աշխատանքը, վորոնք յերբեմն յերեք արշինանոց ճառեր են ասում, մեծ ու ստեղծագործ աշխատանք: Կարելի՞ չե արդյոք համաձայնել դրա հետ: Վրչ, ընկերներ, դրա հետ վոչ մի կերպ համաձայնել չի կարելի: Բեզենչուկի ընկերներն այստեղ սխալ են թույլ տվել: Հնարավոր է, վոր նրանք համեստությունից են թույլ տվել այդ սխալը: Բայց դրանից սխալը չի դադարում սխալ լինելուց: Անցել են այն ժամանակները, յերբ առաջնորդները համարվում էին պատմության միակ ստեղծողները, իսկ բանվորներն ու գյուղացիները հաշվի չէին առնվում: Ժողովուրդների և պետությունների բախտը հիմա վճռում են վրչ միայն առաջնորդները,

այլ ամենից առաջ և զլխավորապես՝ աշխատավորներին միլիոնավոր մասսաները: Բանվորներն ու գյուղացիները, վորոնք առանց աղմուկի և ճարճատյունի կառուցում են գործարաններ ու ֆաբրիկաներ, հանքահորեր և յերկաթուղիներ, կոլտնտեսություններ ու խորհրտնտեսություններ, ստեղծում են կյանքի բոլոր բարիքները, կերակրում ու հագցնում են ամբողջ աշխարհին,—ահա թե ովքեր են նոր կյանքի իսկական հերոսներն ու ստեղծողները: Այս մասին, խնչպես յերևում է, մոռացել են Բեզենչուկի մեր ընկերները: Կալ չե, յերբ մարդիկ գերազնահատում են իրենց ուժերը և սկսում գոռողանալ իրենց ծառայություններով: Այդ տանում է դեպի պարծենկոտություն, իսկ պարծենկոտությունը լավ բան չէ: Բայց ավելի վատ է, յերբ մարդիկ սկսում են թերազնահատել իրենց ուժերը և չեն տեսնում, վոր իրենց «համեստ» ու «անկատելի» աշխատանքն իրոք հանդիսանում է մեծ ու ստեղծագործ աշխատանք, վորը վճռում է պատմության բախտը:

Յեա կցանկանայի, վոր Բեզենչուկի ընկերներն իրենց նամակի նկատմամբ արված իմ այս փոքրիկ ուղղմանը հավանություն տային:

Յեկեք, ընկերներ, վերջացնենք սրանով:

(Յերկար ժամանակ չգաղառոյ ծափահարություններ, վորոնք փոխվում են ուղեցիայի: Բոլոր վոսֆի յեմ կանգնում և փողջուկում են ընկ. Սալիին: Աղաղակներ՝ «Ուռա»: Դախիմում լսվում են բացականություններ— «Կեցցե՛ ընկ. Սալիին, ուռա: Կեցցե՛ առաջավոր կոլսնեստականը: Կեցցե՛ մեր առաջնորդ ընկեր Սալիին»):

1. Կոլտնտեսությունների ուղին միակ ճիշտ ուղին է . . . 5
2. Մեր մերձավորագույն խնդիրն է՝ ունենորդարձնել բոլոր
կոլտնտեսականներին 17
3. Առանձին ղեկավարություններ 23



Թարգմանությունը խմբագրել է Բ. Մարտիրոսյան
Տեխ. խմբագիր Ս. Խաչատրյան
Սրբագրել է Հ. Մանվելյան
Կոնտրոլ սրբագրել է Լ. Աբովյան

Գլավլիտի լիազոր № 4—3276, հրատ. № 566
Պատվեր № 40, տիրաժ 10.000
Հանձնված է արտադրության 15/IV 1938 թ.
Ստորագրված է տպագրելու 3/V 1938 թ.
Գինը 30 Կ., կազմը 80 Կ.

Պետհրատ—Քաղաքական դրահանություն
Հրատարակչության տպարան, Յերևան, Ալավերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



ԳԻՆԸ 75 Կ.

305

И. СТАЛИН
Речь на первом
всесоюзном съезде
колхозников-ударников
Аргиз—Издательство
полит. литературы
Ереван, 1938